368.5
Հ-24

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

«ՊԵՏԱՊ»

ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅՊԵՏԱՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երևան—1928

368.5
Ջ-24
Կ.
1 MAR 2010
1006/29886
1 24

«Հաստատում եմ»
Ս. Խ. Հ. Մ. Ֆինժողկոմ
Ն. Բրյուխանով
14/VI 1928 թ.

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

§ 1. Համաձայն սույն կանոնների ըստ կոոպարային ապահովագրության Պետապը պատասխանատու է՝

ա) Ըստ անասուն. ապահովագրության	բ) Ըստ բուսական մշակույթների ապահովագրության
Անասունների անկման (մահացության) վնասները, որը առաջացել է՝ 1) Բոլոր տեսակի հիվանդություններից։ 2) Բոլոր տեսակի դժբախտ պատահարներից ինչպես որինակ. գազանների պատառոտելուց, հրդեհից, կայծակահարությունից, ցրտահարությունից, խեղդվելուց, ջրահեղձ լինելուց, թունավորվելուց, առարկաներ կուլ տալուց, ելեքտրական հոսանքի հարվածից, արեվահարությունից ելև այլն։ 3) Անբուժելի հիվանդության հետևանքով մորթելուց ելերբ անասունը կորցնում է իրա բոլոր տեսակի ունակությունները (բանվորական, մսի, կաթի ելև ցեղային), ինչպես ելև այն դեպքերում, ելերբ դժբախտ պատահարից անասունը կարող է մահանալ կամ կորցնել իրա բոլոր տեսակի ունակությունները։ 4) Կռտելուց (кастрация)։ 5) Նախազգուշական պատվաստումներից ելև սրսկումներից։ 6) Անասնաբուժական հսկողության կարգադրությամբ վարակիչ հիվանդությունների առաջն առնելու նպատակով մորթելուց։	Կարկտահարության վնասը ինչպես ելև այդ կարկտահարության ուղեկցող հեղեղից։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

44259

§ 2 Կոպարային պարտադիր ապահովագրության, 4-րդ հոդվածի կարգով, յենթակա յեն՝ անձանունները յեվ բուսական մշակույթները, վորոնք պատկանում են մասնավոր մարդկանց թե ֆիզիքական յեվ թե իրավաբանական (կոմունաներին, արտելներին, ընկերություններին, յեվ այլն), ինչպես յեվ կոոպերատիվ կազմակերպություններին։

Մանոր. Այն գույքը, վորը համաձայն պետական ապահովագրության կանոնների առաջի հոդվածի ծանոթության, ապահովագրված և կոոպերատիվ ապահովագրությամբ, ազատ և կոպարային պարտադիր ապահովագրությունից յեթե նա ապահովագրված և վոչ պակաս կոպարային դրույքների (նորմաների) զումարներից։

§ 3. Պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա յեն՝

ա) Անձանուններ	Բուսական մշակություններ
1) Սահմանված ապահովագրական հասակին չհասած (§ 4)։	Յեթե սահմանված չափից փոքր տարածություն են ընդունում (§ 4)։
2) Այն անձնավորությունների անունները, վորոնք վորպես արհեստ պարապում են կոպարային ապահովագրը. յենթակա անունների առեվտրով։	

§ 5. Կոպարային ապահովագրության տարածման շրջանները, կոպարային ապահովագրության դրույքները (նորմաներ) յեվ ապահովագինը (տարիֆային դրույքներ), ապահովագրության ժամկետները, անունների տեսակները, բուսական մշակույթների տեսակները, անունների ապահովագրական հասակը, բուսական մշակույթների տարածության մինիմալ չափը, արտոնությունների չափը, ինչպես յեվ իրա ժամանակին ապահովավճարները չմուծելու հետեվանքով բարդվելիք տույժի չափը սահմանում և ԱՊԽ-ն։

§ 5. Վոչ լրիվ արժեքով կոպարային կարգով ապահովագրված գույքը կարելի յե ապահովագրել, տիրոջ ցանկությամբ, լրացուցիչ կերպով, բացի կոպարային նորմաներից, կամավոր կերպով ըստ համապատասխան կամավոր ապահովագրության տարիֆների։

§ 6. Կոպարային ապահովագրության բոլոր գործառնությունները ազատ են ամեն տեսակի տեղական յեվ համապետական հարկերից յեվ տուրքերից։

II Ա) ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 12. Կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա անունները բուսական մշակույթները ցուցակագրվում են վոչ պակաս քան տարին մեկ անգամ Պետապի սահմանած կարգադրությունների համաձայն։

Բ) ԱՊԱՀՈՎԱԳԻՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅՈՒՅԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

§ 13. Անասնատերերը ու գույքատերերը ցուցակագրության յեվ գնահատության ժամանակ պարտավոր են ճշգրիտ տեղեկություններ տալ իրենց ունեցվածքի մասին յեվ աջակցին ցուցակագրողին։

Մանոր. Պետապը իրավունք ունի ամեն ժամանակ, թե ապահովագրական դեպքից առաջ յեվ թե նրանից հետո, յուր ներկայացուցիչների միջոցով տեղերում ստուգելու ապահովադրի տված տեղեկությունները իրա ունեցվածքի մասին։

III ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐ (ԱՊԱՀՈՎԱԳՈՒՄԱՐՆԵՐ)

§ 14. Կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա գույքը համարվում և ապահովագրված այն ապահովագրական նորմաներով ինչպես նախատեսված կլինի հոդված 4-րդի կարգով։

Այն գույքը, վորի արժեքը կոպարային ապահովագրության նորմայից ցածր և, համարվում և ապահովագրված իրա լրիվ արժեքով։

IV ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

§ 15. Կոպարային ապահովագրության ժամկետները սահմանվում են ԱՊԽ-ի կողմից։

Կոպարային ապահովագրության գույքը համարվում և ապահովագրված անկախ ապահովագնի վճարման ժամանակից։

§ 16. Պետապի պատասխանատվությունը սկսվում է՝

27 FEB 2014

Ըստ անասունների	Ըստ բույսերի
Այն ժամանակվանից յերբ անասունը հասնում է ապահովագրական հասակի, պայմանով սակայն վոր նա անպայման ցուցակագրված լինի։	Դաշտային մշակույթների համար նրանց ցանելու որվանից կամ տնկելուց հետո, իսկ այգիների համար՝ ծաղկի բողբոջների կազմակերպման որվանից սկսում։

§ 17. Կոպարային ապահովագրության ժամանակնշրջանի ընթացքում Պետապի պատասխանատվությունը դադարում է հետեվյալ պարագաներում։

1) Յերբ ապահովագրված գույքը վոչնչանում է վոչ թե ապահովագրական դեպքից ինչպես հիշատակված է սույն կանոնների § 1-ում, այլ վորեվե այլ պատճառից։

2) Յերբ այդ գույքը դատական վորոշմամբ կամ մի այլ պատճառով, առ ու ծախսի կարգով, անցնում է մի այլ տիրոջ վորի գույքը կոպարային պարտադիր ապահովագրության յենթակա չե (§ 2)։

3) Նայեվ հետեվյալ դեպքերում՝

Ըստ անասունների ապահովահրուբ.	Ըստ բուսական մշակույթների
Յերբ ապահովագրված անասունը վորեվե պատճառով պակասում է (դուրս է գալիս, բացառվում է) տվյալ տնտեսությունից (ծախված, գողացված, փախցրած, կորած)։	Յերբ բերքը դաշտից տուն է տարվում. համենայն դեպքս վոչ ավել տասն որ բուսական մշակույթները հնձվելուց հետո, բացի ծխախոտից, խաղողից, բամբակից այգու յեվ պարտեզի մշակույթներից, վորոնց վերաբերմամբ պետապի պատասխանատվությունը դադարում է բերքը ամբողջովին հավաքելուց հետո։

V ԱՊԱՀՈՎԱԳԻՆ

(Ապահովագրական վճարումներ)

§ 18. Ապահովագին սահմանվում է մի վորոշ ժամանակաշրջանի համար ապահովագրական գումարի վորոշ տոկոսային հարաբերությամբ համաձայն ԱՊԽ-ի վորոշման ըստ կոպարային ապահովագրության։

§ 19. Ապահովագինը պետք է մուծել Պետապի դրամարկղը վորոշված ժամկետներին, վորոնց մասին հայտարարվում է բոլորին ի գիտություն։

§ 20. Ապահովագինը վճարվում է լիազորված անձնավորության կամ հիմնարկության։ Ապահովագնի ստացումը վավերացվում է ապահովադիրին տրված հատուկ անդորրագրով կամ մի այլ ձեվով՝ հաստատված Պետապի կողմից։

§ 21. Իրա ժամանակին չստացված ապահովագինը դառնում է հետնույթ յեվ այնուհետեվ գանձվում է վարչական անվիճելի կարգով բարդելով վրան վորոշ տոկոսով տույժ (տուգանք), վորի չափը նույնպես վորոշում է ԱՊԽ-ն ըստ կոպարային ապահովագրության (§ 4)։

§ 22. Այն դեպքում, յերբ ապահովագրվում է վորեվե գույք գործառնական տարվա ընթացքում յեվ վոչ թե տարվա սկզբից, նրա համար ապահովագին գանձվում է հետեվյալ չափով։

Յեթե գույքը ապահովագրության յենթակա յե դառնում գործառնական տարվա առաջի յեռամսյակում, ապահովագին նրա համար սահմանվում է ամբողջ տարվա չափով։

Յեթե գույքը ապահովագրության յենթակա յե դառնում գործառնական տարվա յերկրորդ յեռամսյակում, ապահովագին նրա համար սահմանվում է ամբողջ տարվա ապահովագնի յերկու յերրորդի ($^2/_3$) չափով։

Իսկ յեթե գույքը ապահովագրության յենթակա յե դառնում գործառնական տարվա վերջին յեռամսյակում, նրա համար ապահովագին սահմանվում է տարեկան ապահովագնի մեկ յերրորդի ($^1/_3$) չափով։

§ 24. Այն դեպքերում, յերբ ապահովագրության դադարումի հետեվանքով ապահովադիրին պետք է վերադարձնել ապահովագին, ապա այդպիսին պետք է հաշվել հետեվյալ չափով.

Եթե Պետապի պատասխանատվությունը դադարել է գործառնական տարվա առաջի յեռամսյակում, պետք է ապահովագին վերադարձնել ամբողջ տարվա ապահովագնի յերկու յերրորդի (2/3) չափով. յեթե Պետապի պատասխանատվությունը դադարել է գործառնական տարվա յերկրորդ յեռամսյակում, պետք է ապահովագին վերադարձնել ապահովագիրին տարվա ապահովագնի մեկ յերրորդի (1/3) չափով. իսկ յեթե Պետապի պատասխանատվությունը դադարել է գործառնական տարվա վերջին յեռամսյակում, ապա այդ դեպքում ապահովագին բոլորովին չի վերադարձվում։

Ծանոթ. § 22, 23 ա, բ յեվ 24. չեն վերաբերում բուսական մշակույթներին. բուսական մշակույթների ապահովագինը միշտ եվ գանձվում և լրիվ դրույքով։

§ 25. Յեթե Պետապը հայտնաբերում է վորևվե՛ գույք, վորը յենթակա չե կոպարային ապահովագրության, բայց հաշվառման չե յենթարկված յեվ ապահովագին չե գանձված, ապա ապահովագին գանձվում է այդպիսուց ամբողջ ժամանակամիջոցի համար, վորի ընթացքում պետք է այդ գույքը ապահովագրված լիներ, բայց բոլոր դեպքերում եվ վոչ ավել քան յերկու տարվա համար։

§ 26. Այն դեպքերում յերբ ապահովագիրին պետք է վերադարձվի վորևվե գումար, ապա վերջինի համաձայնությամբ կարելի չե կամ վճարել անմիջապես կամ հաշվել հաջորդ տարվա վճարումների հաշվին։ Նույնպես յեվ հայտնաբերված չբգանձված ապահովագրական պակասորդը ապահովագիրի համաձայնությամբ կամ գանձվում և անմիջապես կամ միացվում է հաջորդ տարվա վճարումներին։

§ 27. Զբաղոր ընակչության համար ԱՊԽ-ի կողմից սահմանվում է առանձին արտոնություններ ապահովագնի վճարումների վերաբերմամբ ըստ կոպարային ապահովագրության։

VI ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆՉԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼԸ

§ 28 Ապահովագիրը պարտավոր է յերկու շաբաթվա ընթացքում հայտնելու Պետապի գործակալին կամ գյուղխորհրդին իրա գույքի մեջ առաջացած այս կամ այն փոփոխությունների մասին ընդհանրապես յեվ մասնավորապես հետևյալը՝

Ըստ անասունների ապահովագրության.	Ըստ բուսական մշակույթի.
1) Այն անասունների մասին, վորոնց նոր է ծնունդ բերել, բացի առաջուց ցուցակագրվածներից նույնպես յեվ այն անասունների մասին, վորոնք ժամանակավորապես փոխադրվել են՝ նրա մոտ կերակրվելու կամ կթվելու համար։ 2) Բոլոր այն անասունների մասին, վորոնք հասնում են ապահովագրական հասակի։ 3) Այն անասունների մասին, վորոնք այս կամ այն կերպ իրա տնտեսությունից բացառվում են։	Այն նոր ցանքսերի տարածությունների մասին, վորոնք վերջին ցուցակագրությամբ չեն հաշվառված։

29. Ապահովագիրի տնտեսության, անասունների կազմի մեջ յեղած փոփոխությունների հաստատման համար Պետապի գործակալը կամ գյուղխորհուրդը պետք է տա նրան համապատասխան վկայական։

§ 30. Այն դեպքում, յերբ գույքը անցնում է մեկ ուրիշ տիրոջ, անհրաժեշտ է պահպանել հետևյալ կարգը.

Ըստ անասունների ապահովագրության.	Ըստ բուսական մշակույթի.
Ապահովագրությունը դադարում է յեվ տարվա մնացած մասի ապահովագինը, համաձայն ապահովագիրի հայտարարության, պետք է վերադարձվի ըստ պատկանելության (§ 23)։ **Ծանոթ.** Յեթե ապահովագիրը մեկ տարվա ընթացքում իրա տնտեսությունից բացառված անասունի փոխարեն մեկ ուրիշն է ծնունդ բերում այն դեպքում § 22, 24 չի կիրառվում. իսկ ապահովագնի տարբերությունը, անհրաժեշտության դեպքում, (յեթե անասունը փոխարինվում է մեկ ուրիշով վորի համար ուրիշ տարիքներ յեվ դրույքներ են սահմանված) հաշվի չե առնվում պրոպորցիոնալ կերպով տարվա մնացած ժամանակի վերաբերմամբ։	Ապահովագրությունը պահպանում է իրա ուժը յեվ այն դեպքում, յերբ այդ գույքը անցնում է մեկ ուրիշ տիրոջ յեվ յեթե այդ գույքը յենթակա չե կոպարային ապահովագրության։ Այդպիսի փոփոխության մասին նոր տերը պետք է հայտնի գյուղխորհրդին կամ Պետապի գործակալին ապահովագրական ցուցակներում համապատասխան փոփոխություններ կատարելու համար։

§ 31. Ապահովադիրը կամ նրան փոխարինողը պարտավոր է միջոցներ ձեռք առնելու կանխելու համար ապահովագրական դեպքը ընդհանրապես յուր մասնավորապես հետևյալը.

Ըստ անասունների ապահովագրության.	Ըստ բուսական մշակույթի.
Անասունի (լինի նա ապահովագրված թե չէ) հիվանդության դեպքում անմիջապես, համենայն դեպս վոչ ուշ 3 որվանից, այդ մասին պետք է հայտնի գյուղխորհրդին, իսկ հնարավորության դեպքում նայելով մոտակա անասնաբուժին կամ անասնաբուժակին։ Բացի այդ նա պարտավոր է կատարելու յուր ձեռք առնելու այն բոլոր միջոցները, վորոնք սահմանված կլինեն անասնաբուժական-առողջապահական կազմի կողմից յուր պարտադիր վորոշումներով։	

VI ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴԵՊՔԻՑ ՀԵՏՈ

§ 32. Ապահովադիրը կամ նրան փոխարինողը պարտավոր է անմիջապես հայտնել Պետապի գործակալին կամ գյուղխորհրդին, վոչ ուշ քան յերկու որվանից, ապահովագրական դեպքի մասին, վորը պատահել է իրա գույքի վերաբերմամբ § (1)։

Յեթե միյնույն ապահովագրական դեպքից վնասվել են մի քանի հոգի, բավական է այդ դեպքում նրանցից մեկն ու մեկի հայտարարությունը սույն հոդվածում նշված մասով։

§ 33. Ապահովադիրի կողմից ապահովագրական դեպքի մասին արած ծանուցումն հաստատելու մասով գյուղխորհուրդը կամ Պետապի գործակալը պիտի նրան տան համապատասխան վկայական։

Ծանոթ Այն դեպքում, յերբ ապահովագրական վարձատրություն վնասի համար տրվում է անմիջապես, վերոհիշյալ վկայական տալը պարտադիր չէ։

§ 34. Ապահովագրական դեպքի ժամանակ ապահովադիրը պարտավոր է՝

I Բոլոր այն միջոցները, վոր կառաջադրվի Պետապի գործակալի կողմից, ձեռք առնել վնասի չափը նվազեցնելու համար ընդհանրապես յուր մասնավորապես՝

Ըստ անասունների ապահովագրության.	Ըստ բուսական մշակույթի.
Այն դեպքում յերբ տեղի յե ունենում դժբախտ դեպք կամ անասունը հիվանդանում է անբուժելի հիվանդությամբ, վորը կարող է մահացու լինել յուր կորստի մատնել նրա բոլոր տեսակի ունակությունները (բանվորական, մսացույի, կաթի յուր ցեղական) պետք է մորթել անասունը միսը ոգտագործելու համար յեթե այդ թույլ է տրված անասնաբուժական կազմի կողմից յուր գյուղխորհուրդ. կողմից։	Մինչև ակտի կազմելը, սահմանված ժամանակվա ընթացքում չպետք է արածացնել վնասված ցանքը յուր առհասարակ վոչ մի գործողություն չպետք է կատարել, վորը կարող է նվազեցնել կարկտահարությունից հետո մնացած բերքը։ Բացի այդ ապահովադիրը պարտավոր է իրա հաշվին շարունակի խնամք տանել կարկտահարությունից ազատ մնացած ցանքի մասերը, յեթե այդ պահանջում է բույսի կանոնավոր մշակման պարագաները։

II Բացի այդ ապահովադիրը պարտավոր է վոչ մի գործողություն չկատարելու, վորը կարող է բարձրացնել յուր խանգարել Պետապի գործակալին վնասի չափը ճիշտ վորոշելու ընդհանրապես, յուր մասնավորապես՝

Ըստ անասունների ապահովագրության	Ըստ բուսական մշակույթի
Պահպանել դիակը կամ նրա մնացորդները մինչև լուծարքային ակտ կազմելը (§ 35), բայց վոչ ավել յերկու որվանից անկումից հետո. իսկ նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը վոչ ավել 4 որվանից նիշված կարգը պահպանելու կարիք չկա այն դեպքում, յերբ անասունը սուր վարակիչ հիվանդությամբ և մահացել յեվ յեթե այդ թույլ և տվել գյուղխորհուրդը։	Բերքը կարկտահարված հողամասից չտեղափոխել, յեթե այդ չի հակասում այդ բերքի նպատակահարմար ոգտագործման յեղանակին։

§ 35. Ապահովագրական դեպքի մասին լուծարքային ակտ պետք և կազմի Պետապի ներկայացուցիչը հետևյալ ժամանակամիջոցում՝

Ըստ անասունների ապահովագրության	Ըստ բուսական մշակույթի
Վոչ ուշ մեկ որվանից ապահովադիրի կողմից նրան հայտնելուց հետո։	Վոչ ուշ քան 3 որվա ընթացքում ապահովադիրից ծանուցագիր ստացվելուց հետո յեթե ապահովադիրը վերացանելու մտադրություն ունի։ Մնացած դեպքում այն ժամկետներին, որ կնշանակի Պետապը, բայց մինչև բերքի հավաքույթը։

Պետապի հանձնարարությամբ ակտ կարող և կազմել հատապատասխան դեպքերում գյուղատնտեսը, անասնաբուժը կամ գյուղխորհուրդը։

§ 36. Լուծարքային ակտը կազմվում և վնասված գույքի

զննության հիման վրա. այդ դեպքում ապահովադիրը պարտավոր և հաղորդելու բոլոր տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են վնասի իրական չափը վորոշելու համար։ Անասունների անկման վնասի համար ապահովադիրը պետք և զննության ներկայացնի անասունի դիակը կամ նրա մնացորդները։ Այն դեպքում յերբ բացարձակապես անհնար և դիակը կամ նրա մնացորդները զննության ներկայացնելու, այդ հանգամանքը պետք և արձանագրվի լուծարքային ակտի մեջ իսկ անասունի մահացման փաստը պետք և հաստատվի վկաների ցուցմունքներով։

Ակտը պետք և ստորագրեն ապահովադիրը, Պետապի ներկայացուցիչը, տեղական իշխանության ներկայացուցիչը կամ յերկու վկաներ։

§ 37. Սահմանված ժամկետներին լուծարքային ակտ չը-կազմելու դեպքում ապահովադիրը իրավունք ունի.

Ըստ անասուն. ապահ.	Ըստ բուսակ. մշակույթ
Վկաների ներկայությամբ դիակը թաղելու կամ հեռացնելու։	Վերացանել, կամ բերքի կատարելապես հասունացած լինելու պատճառով հավաքել այն

III ՎՆԱՍԻ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ըստ անասունների ապահովահրության

§ 43. Ապահովագրված անասունի մահվան ապահովագրական վարձատրության չափը վորոշում և կոպարային ապահովագրական գումարի լրիվ չափով, բայց վոչ բարձր անասունի փաստական արժեքից. դիակը մնում և անասնատիրոջ ոգտին։

Ծանոթ. 1. Անասունի փաստական արժեքը վորոշվում և նույն վայրի շուկայի գների համեմատությամբ նույն պետի ու առողջության անասունի համար։

2. Յեթե փաստական արժեքը յեվ համեմատական չափով ապահովագրական վարձատրությունը նվա-

զեցվում է, ապա ապահովագիրին պետք է վերադարձնել հարաբերական չափով ավել գանձված ապահովագինը։

§ 44. Անասնաբուժական կազմի վորոշման համաձայն սպանված անասունի ապահովագրական վարձատրություն տրվում է կոպարային դրույքի 60%-ի չափով, յեթե սպանված անասունի միսը թույլ է տրվում ոգտագործելու վորպես ուտելիք։ Նույն չափով է վորոշվում յեվ այն անասունի վնասը, վորը մահացել է անասնաբուժի կամ գյուղխորհրդի կողմից ապահովագիրներին արած առաջարկությունը—մորթել անասունին—չկատարելու հետեվանքով։

Գանոթ. Այն անասունների, վորոնց միսը տեղական պայմաններում չեն ոգտագործում, մորթելու դիպքում ապահովագրական վարձատրությունը տրվում է լրիվ չափով։

Ըստ բուսական մշակույթների

§ 45. Բուսական մշակույթների վնասի չափը վորոշելու համար անհրաժեշտ է՝ ա) վորոշել տարերային դժբախտությամբ վնասված տարածությունը, բ) տվյալ տարածության բուսական մշակույթների վնասի միջին տոկոսը։

Տարածությունը վորոշվում է փաստական յերկրաչափական չափումով յեվ հաշվի չի առնվում համենայն դեպս վոչ ավելի այն տարածությունից վորը ցուցակագրված է նույն տարվա ընթացքում (գումարելով նրան նոր ցանքսի տարածությունը, վորը հայտնվում է համաձայն § 28-ի)։ Իսկ յեթե տարերային դժբախտությունը տեղի չի ունեցել մինչեվ տվյալ տարվա ցուցակագրությունը, ապա պետք է ընդունել փաստական տարածությունը ըստ յերկրաչափական չափերի հետեվանքի։

Վնասի տոկոսը վորոշվում է փաստական, կամ սպասվելիք բերքի համեմատությամբ. այսինքն այն բերքի համեմատությամբ, վոր պետք է ստացվեր յեթե այդ տարերային դժբախտությունը, կարկտահարությունը տեղի չունենար։

Վարձատրության չափը վորոշվում է բազմապատկելով՝

ա) կոպարային դրույքը

բ) վնասված տարածության չափը

գ) վնասի տոկոսը

Գանոթ. 1. Այն դեպքում, յերբ տարածությունը ցուցակագրվածից ավելի կամ պակաս է լինում, ապահովագնի տարբերությունը հաշվի չի առնվում։

2. Յեթե բերքի արժեքը կոպարային դրույքից ցածր է, պետք է հաշվի առնել նրա փաստական, շուկայի արժեքը։

Ընդհանուր կանոններ բոլոր տեսակների համար

§ 46. Յեթե վնասված գույքը սխալմամբ ապահովագրված է յեղել կոպարային դրույքներից բարձր կամ ցածր, նրա ապահովագրական վարձատրությունը վորոշվում է այն կոպարային դրույքներով, վորոնցով նա պետք է ապահովագրված լիներ։ Այդ դեպքում սխալ հաշվարկված ապահովագինը պետք է հաշվի առնավի համապատասխան կերպով։

§ 47. Ապահովագիրը զրկվում է ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքներից հետեվյալ դեպքերում

ա) Յեթե ապահովագրական դեպքը կատարված է ածված դիտավորյալ կերպով ապահովագիրի կողմից։

Գանոթ. Գյուղական բնակչության գույքը ապահովագրելիս պետք է պահպանել հետեվյալը.

ա) Տվյալ գյուղական միավոր տնտեսությունը զրկվում է ապահովագրական վարցատրություն ստանալու իրավունքից, յեթե դատարանով հաստատված կլինի. վոր ապահովագրական դեպքը առաջադրել է այդ տան անդամներից վորևե մեկի կողմից դիտավորյալ կերպով ապահովագրական վարձատրություն ստանալու համար,

բ) Յեթե ապահովագրական դեպքը առաջացել է տան անդամներից մեկն ու մեկի կողմից դիտավորյալ կերպով կատարված գործողությունների հետեվանքով սակայ վոչ թե այդ դիտումներով, ինչպես ասված է կետ «ա»-ում այլ ուրիշ միտումներով, պետապը վրեշորում է ապահովագրական վարձատրություն դուրս գալով գումարից այն մասը, վորը պետք է կազմեր ընտանիքի այդ անդամի բաժինը, վորի հանցանքով ել առաջացել է այդ ապահովագրական դեպքը։

գ) Յեթե ապահովագիրը ապահովագրական վարձատրություն ստանալու պահանջ է ներկայացնում յեր-

կու տարուց հետո հաշված ապահովագրական դեպքի որվանից։

դ) Բոլոր այն դեպքերում, յերբ ապահովագրությունը դադարել է համաձայն սույն կանոնների § 17-ի։

§ 48 Պետապը իրավունք ունի մերժելու վճարել ապահովագրական վարձատրություն յեթե՝

ա) ապահովագիրը հնարավորություն ունենալով հանդերձ չի հայտնել ապահովագրական դեպքի մասին պետապին սույն կանոնների « 32-ում հիշատակված սահմանված ժամկետներին։

բ) ապահովագիրը, հնարավորություն ունենալով հանդերձ միջոցներ ձեռք չի առել ապահովագրական դեպքը կանխելու, գույքը փրկելու յեթե դիտավորյալ գործողություններով ավելացնում է վնասի չափը կամ փոխադրում է մի այլ տեղ վնասված գույքի հետքը ծածկելու մտքով։

Բացի այդ՝

Ըստ անասունների ապահովագր.	Ըստ բուսակ. մթերակույտ.
Յեթե ապահովագիրը ցուցակագրության ժամանակ սխալ տեղեկություններ և տվել իրա անասունների թվի մասին, վորոնք յենթակա յեն ապահովագրման կոպարային կարգով (§ 13). կամ հետագայում ձեռք բերած անասունների մասին չի հայտնել (§ 28)։ Այդ դեպքում ապահովագրական վարձատրություն չի վճարում այն առաջի մահացած անասունների համար այն չափով, վոր չափով ավել է ապահովագրված անասուններից։ Յեթե ապահովագիրը հնարավորություն ունենալով հանդերձ, չի ցույց տվել մահացած անասունի դիակը կամ դիակի մնացորդներ։	

IX ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ

§ 49. Ապահովագրական վարձատրությունը վճարվում է

(կամ փոխադրվում է ըստ ապահովագիրի ցանկության փասատով) առանց ուշացնելու յեվ համենայն դեպս վոչ ուշ քան մեկ ամսից ուծարքային ակտը կազմվելուց հետո յեթե այդ ապահովագիրի կամ նրա ընտանիքի անդամներից վորեվ է մեկի դեմ դատական գործ չի հարուցված դիտավորյալ կերպով վնաս հասցնելու մեղադրանքով։ Այդ վերջին դեպքում ապահովագրական վարձատրություն վճարվում է միայն դատական գործը վերջացնելուց հետո։

Այն դեպքում, յերբ վնեն ծագում վնասված գույքի սեփականատիրական իրավունքների մասին, ապահովագրական վարձատրություն չի տրվում մինչեվ գործի դատական կարգով լուծումը։

Փաստ. Այն դեպքում, յերբ ապահովագիրը չի համաձայնվում ապահովագրական վարձատրության չափի հետ, նրան վճարվում է պետապի կողմից վորոշած վնասի գումարը՝ վերապահելով նրան հայց հարուցելու լրացուցիչ վարձատրություն ստանալու համար § 53 յեվ 54-ի համաձայն։

§ 50. Կոպարային ապահովագրության կարգով ապահովագրին հասանելիք ապահովագրական վարձատրությունից չի կարելի դուրս գալ, պահել ապահովագիրի պարտքը պետ մարմիններին կամ մասնավոր մարդկանց. բացի նրա վրա մնացած հետևությից յեվ կոպարային վճարումներից ինչպես յեվ աշխատավարձի հաշվին նրա ունեցած պարտքից, ապահովագրության պարտքից յեվ վարկային ընկերությունների պահանջներից յեթե վնասված գույքը համարվել է վորպես գրավական նրան դրված վարկի։

§ 51. Ապահովագրական վարձատրությունը վճարելուց հետո պետապը իրավունք է ստանում, այդ վճարված գումարի սահմաններում, հայց հարուցելու այն բոլոր անձնավորությունների յեվ հիմնարկությունների դեմ, վորոնցից կարելի յե պահանջել տեղի ունեցած վնասի գումարը։

Յեթե ապահովագիրը կհրաժարվի այդ իրավունքները անձնավորությունների վերաբերմամբ վերապահել պետապին, ապա պետապը ազատվում է իրա պարտակցությունից վճարելու ապահովագրական վարձատրություն համապատասխան չափով։

§ 52. Ապահովագրական վարձատրության չափի մասին համաձայնություն կայանալուց հետո սկսվում են հետևյալ հետևանքները ըստ բուսական մշակույթների ապահովագրության։

Եթե բուսական մշակույթների վնասի լուծարքի հետևանքով ապահովադիրը ստանում է ապահովագրական վարձատրություն կոպարային դրույքի $^3/_4$ ավելի յուր այնուհետև վերացանում է կամ տնկում, ապահովագին գանձվում է նրանից նոր ցանքսի համար լրիվ չափով։

Եթե տրվում է ապահովագրական վարձատրություն կոպարային դրույքի $^3/_4$-ից պակաս, ապա նոր ցանքսը համարվում է ամբողջովին ապահովագրված առանց նորից ապահովագին վճարելու։ Եթե չի վերացանվում, ապահովագրական վարձատրություն տրվելուց հետո, ապահովագրությունը պահպանում է իրա ուժը պակասեցրած այն չափն գումարով, որքան նրան վճարված է ապահովագրական վարձատրություն։

X ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ՅԵՎ ԴԱՏԻ ՀԱՆՁՆՈՒՄ

§ 53. Բոլոր բողոքները պետական գործակալների կամ նրանց փոխարինողները սխալ գործողությունների մասին տրվում է Անդրպետական Վարչության Հայաստանի Լիզորության Վարչության. Լիազորի Վարչության դեմ դրված բողոքները քննվում են Անդրպետական Վարչության կողմից։ Պետական վերադաս մարմիններին բողոքներ ներկայացնելը, ի հարկ է, նրանց տվողներին չի զրկում իրավունքից յուր դատական գործ սկսելու պետական դեմ։

§ 54. Դատական հայցերը ըստ կոպարային ապահովագրության կարելի յե ներկայացնել այն դատական մարմիններին, ուր գտնվում են համապատասխան շրջանային գործակալները կամ պետական մարմինները։ Ինչպես յուր պետական հանրապետական վարչությունը։

ՊԵՏԱՊ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ~~ՄՈՍԿՈՎՅԱՆԻ~~
Անվան
Պետական Տպարան

ԳՐԱՌԵՊ. № 1617 (Բ) ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-ՐԴ ՏՊ. ՏԻՐԱԺ 3000 ՊԱՏ. № 1038

ՀՀ Ազգային գրադարան
NL0211269

44.259